## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1222-Ա

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲԱՅՐՈՆԻ ՓՈՂ. 28/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ,ՋԵՄՄԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ,ՀԵՂԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ,ՆԱՐԵ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԵԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի N 510-Ն՝ «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 27-ի N 50-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Բայրոնի փող,28/1 տուն հասցեում գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար հատկացված 0.19 հա հողամասին կից 0.0066հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրայր Մխիթարյանին,Ջեմմա Ոսկանյանին,Հեղինե Մխիթարյանին,Նարե Մխիթարյանին և Նարեկ Մխիթարյանին համատեղ բաժնային սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ., 26.12.2002թ. թիվ 510-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ 64 հոդվածի 1-ին կետի պահանջներին:
2. Հրայր Ռազմիկի Մխիթարյանին՝ ծնված 18.02.1965թ.,Ջեմմա Գուրգենի Ոսկանյանին՝ ծնված 08.01.1966թ.,Հեղինե Հրայրի Մխիթարյանին՝ ծնված 10.04.1987թ.,Նարե Հրայրի Մխիթարյանին՝ծնված 03.04.1990թ. և Նարեկ Հրայրի Մխիթարյանին՝ ծնված 01.12.1991թ. համատեղ բաժնային սեփականության իրավունքով հատկացվել է 0.19 հա տնամերձ հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է 0.1966 հա: Հողամասի վրա 1990 թվականին կառուցված 117.53 քմ ներքին մակերեսով անավարտ բնակելի տունը և 14.4քմ ընդհանուր մակերեսով բաց պատշգամբները,որոնք կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Հրայր Ռազմիկի Մխիթարյանի,Ջեմմա Գուրգենի

Ոսկանյանի,Հեղինե Հրայրի Մխիթարյանի,Նարե Հրայրի Մխիթարյանի և Նարեկ Հրայրի Մխիթարյանի համատեղ բաժնային սեփական գույք:

3. Համայնքի կողմից Հրայր Մխիթարյանին,Ջեմմա Ոսկանյանին,Հեղինե,Նարե և Նարեկ Մխիթարյաններին համատեղ բաժնային սեփականության իրավունքով հատկացված 0.1966 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար` ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

2024 թ. նոյեմբերի 11

ք.Ճամբարակ